Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ «Երևանի հ.8 մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի լոգոպեդի (1.0 դրույք) թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում են առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել.

-դիմում (Ձև 1).

- կրթության մասին փաստաթուղթ (դիպլոմ).

- անձը հաստատող փաստաթուղթ.

- աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք կամ աշխատանքային գրքույկ (առկայության դեպքում).

- ինքնակենսագրություն (Ձև 4).

- մեկ լուսանկար՝ 3x4 չափի.

-այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ.

-Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ կամ զինվորական կցագրման վկայական.

-հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում).

- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը ներկայացված փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ, բնօրինակները՝ վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ, կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել թերությունները և համալրել փաստաթղթերի ցանկը: Փաստաթղթերն ընդունվում են 2025թ հոկտեմբերի 07-ից մինչև 2025թ նոյեմբերի 05-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-17:00, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2025թ նոյեմբերի 13-ին՝ ժամը 11:30-ին «Երևանի հ.8 մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ում, հասցեն՝ ք. Երևան, Չարենցի 38:

Տեղեկությունների համար զանգահարել 010-55-16-20 հեռախոսահամարով: